

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիսիոյ համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արտասահմանի համար (Երկու քիւր մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Նամակ դրամ եռայնը դրկնը հետեւեալ հասցեով

ИПРАВУННИКЪ «ИРОВОУННИКЪ»
Редакция на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)
Redaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րուղովի կամ մասամբ:
Խմբագրական տղար 20 սանթիմ. երե-
փեկ տեղի անգամներու համար 20 0/0
գեղջ կը շինի:

ՄԵՐ ԾՆՈՂԱՅ ՍԽԱԼՐ

Մտէ՛ք մեր վարժարաններու մէջ
աչքէ անցուցէ՛ք դասարանները,
նախապատրաստականէն սկսեալ
մինչեւ բարձրագոյնը, հոն անմի-
ջապէս բան մը ուշադրութիւնդ
պիտի գրաւէ, այն է բաժանում-
ներու մէկէն միւսը աշակերտներու
թուոյն մէջ եղած անհամեմատ եւ
անհուն տարբերութիւնը. այնպէս
որ հոծ բազմութիւն մը խոնկած
կայ նախապատրաստականը, մինչ-
դեռ դատարկ են բարձագոյնի
նստարանները: Եթէ մասնաւորե-
րով խօսքս ըսեմ թէ վերագր-
եալ նկարագրութիւնը դժբախտա-
բար Հայոց վարժարաններուն մի-
այն սեփական է, կարծեմ չա-
փազանցած չեմ ըլլար: Արդեօք
ինչո՞ւ է այսպէս, ու՞ր կերթան,
ինչ կըլլան մեր նախապատրաս-
տականի կամ մանկապարտէզի
հարկաւոր տղեկները:

Նախ խորհինք մանչերուն հա-
մար:
Այո՛, մանչերը կը պակսին, ու-
րովհետեւ անոցմէ շատերուն ծը-
նողքը դեռ հազիւ իր տղուն այր-
ուբներ սովորեցուցած կը քաշէ
կառնէ վարժարանէն. չի թողոր
որ նա հանդարտօրէն հետեւի իր
ամենէն վերջին շրջանը, կը խա-
րնցնէ իր վարդ տղուն նորածիլ
վիճակը: Եւ ի՞նչ իրաւամբ: Ու-
րովհետեւ մայրը կը մոտածէ թէ՛
իր զաւակը ուսումէ աւելի պար-
տի հետեւիլ տրուեստի մը, ժամ
առաջ իր ընտանիքին օժանդակ
մը ըլլալու յոյսով: Ճիշդ այսպէս
կը խորհին մեր մէջ կարգ մը հայ-
երն ու մայրեր: Սակայն այդպի-
սիները թող գիտնան որ շատ
անիրաւ են իրենց այդ պատճա-
ռաբանութեան մէջ, չարաչար կը
սխալին իրենց այդ թեթեւ հաշ-
ւոյն մէջ, վերջապէս գիտնան որ
օրին մէկը իրենց գերեզմանին վը-
րայ հայհոյանքներու, նզովքե-
րու եւ անէծքներու շարք մը ան-
խուսափելի է:

Իրաւ, ոչ ոք կրնայ ուրանալ
թէ տղայ մը ելլէ չափահաս կըլ-
լայ, ամեն բանէ աւելի եւ ամեն
բանէ առաջ իր ծնողացը օգնելու

անմիջական ստիպողականութեան
մէջ կը գտնուի, մանաւանդ երբ
մեր ազգին ներկայ անցուկ վի-
ճակը ի նկատի առնուի. սակայն
միւս կողմէն ո՞վ կրնայ չի խոստո-
վանիլ թէ՛ նախնական ուսումնե-
րու վրայ գէթ ըջիկ մը տեղեկու-
թիւն չ'ունեցող է՛ն յետին ար-
ուեստաւորը, ամենէն պարզ գոր-
ծաւորը իր ձեռք ձգած չոր ու
ցամաք արուեստին շնորհիւ, ա-
պագային հազիւ իր փորը միայն
կրնայ կշտացնել եւ այդ ալ շատ
անգամ դժուարաւ, շատ անգամ
կէս կուշտ կէս անօթի քանի որ
չկայ արուեստ մը որ գիտութեան
մէկ կամ միւս ճիւղին հետ կա-
պակցութիւն չունենայ:

Ուրեմն ի՞նչ ընել, հացը՞ զոհել
թէ ուսումը: Անշուշտ ժամանա-
կի մը համար հացը զոհել պէտք
է իսկ եթէ կարելի ըլլայ չի զո-
հել ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը, այլ
երկուքին ալ շատ քիչ զոհացում
տալ պարտինք:

Հոս առանց նկատողութեան առ-
նելու այն խել մը յուրի սովորու-
թիւնները, որոնց շատ մը հայեր
ու մայրեր գերի են դարձած եւ ու-
րոնցմէ երբ հրաժարին, ոչ թէ
մէկ ալ իրեներին նման երկու ե-
րեք տղայոց ալ վարժարանական
ծախքը կրնան մատակարարել,
պիտի ըսեմ թէ՛ ուսման անհրա-
ժեշտութիւնը ըմբռնող ծնողները
մեր ըսածը իրագործելու համար
ուրիշ միջոց մը ունին ձեռքերնին,
միջոց մը որուն կը դիմեն մենք
աւելի քաղաքակրթեալ ազգերը:
Այդ միջոցն է տղան աշխատանոց-
ներու մէջ ցորեկները աշխատցնել,
իսկ գիշերները զայն ուսման հե-
տեւցնել: Սակայն ասիկայ այն
երկիրներու համար կարելի կըլլայ,
ուր թէ՛ աշխատանոցներ եւ թէ՛
գիշերային դասախօսութիւններ
գոյութիւն ունին, մինչդեռ մենք
այդ երկուքէն ալ զուրկ ենք:
Այսու հանգերձ մենք ալ մեր կար-
գին նմանօրինակ բան մը կրնանք
ընել. տղան վարժարան ղրկել ցո-
րեկները, իսկ արձակուրդէ յետոյ
թողուլ որ անիկայ մէկ քանի ժա-
մեր ալ իր նիւթականը ապահովը-
նող տարբեր գործով մը զբաղի,
մինչեւ իսկ թողուլ որ փողոցները

չըլուն մանրավաճառութեան դի-
մէ. ասով արդէն շատ քիչ մենք
մեր նպատակին հասած կը համա-
րուինք: Եւ միթէ տղու մը այս
աքաբըր ամօթ է իրեն համար,
ո՞վ կը համարձակի զայն այդա-
նել կամ մեղադրել:

Ես իմ մասին կը ճանչնամ մէկէ
աւելի տղայներ, որոնք այս եղա-
նակաւ վարժարան կը յաճախեն
եւ որոնց այս արարքը մասնաւոր
գովեստի եւ գնահատութեան ար-
ժանի կը գտնեմ:

Իրաւ, ասանկ տղայ մը բնա-
կանաբար բաւական դժուարու-
թիւն կը քաշէ իր դասատուները
գոհացնելու մասին, սակայն եւ
այնպէս անիկայ դարձեալ կը յա-
ջողի իրեն պէտք եղած պաշարը
առնել վարժարանէն:

Հիմա անցնինք աղջկանց:
Շապուռն

ՄԱՀԱՑՈՒ ՄԵՂԲ Է

Ալ հերի՛ք է, իրօք ամօթ է
մեզք է եւ մահացու մեղք:

Խօսքս ձեզի է Շաւրժուռնի մէջ
գրողներ, դիմագրուի եղած պա-
րոններ. ա՛լ գիտցէ՛ք որ ըրածնիդ
ստորնութիւն է, արդարութեան
դէմ մեղանչել է. գիտցէ՛ք որ մեր
այս տաղնապալից վիճակին մէջ
ազգին վերքերը թունալից լեղուով
լցելը հրէշային արարք մըն է. ալ
դադարեցէ՛ք Աձյ, սիրոյն ըլլայ:

Ես ինքս իբրեւ պարզ անհատ
եւ ժամանակէ մը ի վեր տեղույս
հայ լրագրութեան ընթացքին ու-
չի ուշով հետեւող մէկը, երբէք
չպիտի ուզէի ձայն բարձրացնել
երկու թերթերուն միջեւ եղած
փոփոխակի յարձակումներուն, ցոր-
չափ գործը հանրութեան կամ ազ-
գին շահը վտանգող հանգամանք
մը չունենար, սակայն հիմա որ
այս անանկաբն է գոյութիւն ու-
նեցողը, կուզեմ ես ալ երկու խօսք
ընել:

Պարոնա՛յք, իրաւունքի խմբա-
գրութիւնը արդարութիւն մը ե-
րեւան հանեց, արդարութիւն մը
զոր քօղարկելու համար բաւական
աշխատութիւն եւ ճիգ թափուած

կերելի: Անիկայ բողոք մը ըրաւ,
որուն պատասխանելու համար դուք
հրապարակ նետուեցաք: Ուրեմն
ըստ մեզ դուք էք պատասխանա-
տու այդ գործուած ստոր արար-
քին, զոր ծածկելու համար դեռ
կը պատուտուիք:

Արդ՝ կը հարցնեմ ձեզի, դուք
ինքզինքնիդ արդարացնելու համար
ի՞նչ ըրիք, ի՞նչ գրեցիք կամ լաւ
եւ ի՞նչ էր գրածնիդ. ըսել կու-
զէիք թէ վատնե՛լ պէտք էր այդ
գոյքերը, կամ թէ տեղէ մը գան-
ձուած գրամը եւ կամ ազգին տըր-
ուած մէկ նուէրը այս կերպով կը
գործածէք դուք մեր օգտին. վեր-
ջապէս ըսել կուզէք թէ՛ իրաւունք-
քի խմբագրութեան ըրածը անձ-
ցակա՞ն կրքի արգասիք էր եւ կամ
թէ անիկայ ազգի մը փրկութեան
համար աշխատող անձնուրացներու
սուրբ գործը կասեցնելու, աւրեւ
լու կամ քանդելու՞ կը ծռայէր:
Եթէ այս ըսել կուզէք, խաբուած
էք, սխալ էք, սո՛ւտ էք:

Ձեռք գիտել Ձեռնէ որոնք, ազ-
գին նուիրեալ 28 սնտուկ գոյքերը
իւրացուցած, ծախած, որկալա-
կուլ ըրած եւ կծիկը դրած են ե-
ղեր. ահա գործին ճշմարտութիւ-
նը:

Դուք ասիկայ կրնա՞ք ուրանալ:
Քանի որ ո՛չ, դուք եւ ձեր նմաննե-
րը ամենքդ ալ պատասխանատու
էք Աձյ, մարդոց եւ ազգին ա-
ռաջ, ամենքդ ալ գողին մեղսակից-
ներն էք, Պ. քաղաքի Դաշնակցու-
թեան անդամներէն սկսելով, մին-
Պալքանեան գօմիթէթի համայն
այն ճիւղերը, որոնք դիտնալով
հանգերձ այս գաղտնիքը, չուզե-
ցին պարզել ժողովուրդին, ժողո-
վուրդին՝ որուն նուիրական իրա-
ւունքն է միշտ գիտնալ, տեղեկա-
նալ իր աւանդին վրայ եղած յար-
ձակումները եւ զեղծումները:

Այո՛ պարոններ, երբեմն գա-
թակցութիւնէ մը խոյս տալու
համար հարկ կըլլայ լուի, հարկ
կըլլայ եղած զեղծումը սքողել,
սակայն երկու գլխաւոր պատճառ-
ներով, մէկ մը որ երբ խնդրը
չնչին գումարի մը շուրջը կը գառ-
նայ, երկրորդ որ երբ այդ զեղ-
ծումէն կամ փաստէն գէթ տուժող-
ները տեղեկ կըլլան. իսկ հոս ոչ
մէկը եւ ոչ միւսը գոյութիւն ու-
նեցած է: Դուք ոչ միայն խնդիրը

կարեւոր և տուժող անձնաւորութեանց առաջ չէք պարզած, այլ ևս հիմայ որ հրապարակ ելած է, անամօթաբար մարել և զոցել կը ճգնիք, իբր թէ խնդիրը 10 փառայի վրայ եղած ըլլար: Մէկ խօսքով մենք իրաւունք չունէինք կասկածելու թէ՛ Դուք և ձեր նմանները կրած են գողերուն արբանեակները և թէ քանի Դուք մնաք, զեղծումը զեղծում ըլլալէ չի պիտի դադրի և կամ շարունակուելու կրկնուելու մեծ հաւանականութիւն կայ:

Ի՞նչ տարբերութիւն ձեր և Նազարեկեանին միջեւ. անիկայ պատժուեցաւ, անիկայ խայտառակուեցաւ. ուրեմն դուք ալ պէտք է պատժուիք. ապա թէ ոչ մենք ամենքնիս այս օրուրնէ կը դադրինք Պալաքանեան գօմիթէթի վրայ վատահոլութիւն ունենալէ: Այո՛, կամ անհրաժեշտօրէն ձեզի մաքրել, նմաններուդ վրայէն սրբելով Դաշնակցական անունը և կամ մենք իսպառ մոռնալու ենք այդ անունը: Հոգ չէ, թող ջնջուի Հնչակ մը և անոր յարջորդէ Դրօշակ մը, ինչպէս նաեւ թող ջնջուի այս վերջինը իրեն յաջորդելու համար տարբեր մը: Ազգը չի վհատիր և երբեք չի դադրեցներ իր նախնաւորութիւնները, երբ գիտէ թէ իր գործը անկեղծ, մաքուր, ընտրեալ և վատահոլի դասակարգի մը հետ է:

Եւ Դուք պարոն խմբագիր Իրաւունք լրագրոյ, խմբրեմ որպէս զի աւելի լուսաբանէք և պարզէք խնդիրը և եթէ կարելի է բոլոր մեղապարտները մատնացոյց ընէք, որովհետեւ ազգին շահը այս կը պահանջէ:

Ի. Յ. Թ.

Յ. Գ.—Գալով Զօրօի նմաններուն, կը զգացնենք իրենց թէ շատ

ուշ են մնացած վսեմ կամ նսեմ գաղափարներու տէր օւկան մը պաշտպանելու համար:

Է՛, Պարոն Զէնօ, ո՛ւր էիք մինչեւ հիմա, ըսէք տեսնեմ, ո՞ր անկիւնն էիք, ասանկ վայրկեանի մը կըսպասէիք ձաղկելու համար այս կամ այն թերթը, գովաբանելու համար երբորդ մը. շիտակը թէեւ առաջին անգամ, (*) սակաւ յարմար առիթի հրապարակ կը նետուիք. երանի՛ թէ քիչ մըն ալ դանդաղէիք:

Այո՛ առիթը յարմար է, վարդօ և իր նմաններու գոյութիւնը սուր ասեղին ծայրն է, ինչպէս չը ըսեն, միշտ վրայ, ուրեմն պէտք է ամուր բռնել անոր քղանքներէն:

Նուիրական վատահոլութիւն մը չաւարտը գործածել, տասը փարաներով ժողովուրդը ազգին դրամը կոկորդիլոսի սառնարտութեամբ կլլել տալ, ասո՞նք են ձեր հիւանդի և սքանչելի կոչած թերթին ուղղութիւնը կամ բնաբանը. և զեռկեցեր կուս մղելու է կըսէք, հէ՛:

Ի՞նչ, դուք ալ ալգին քիթի կուզէք խնդալ, ի՞նչ է տեսնենք մը զերիք կախիւրդ. անհատականի գոյութեան կուս, ապա թէ ոչ, փայլուն ապագայ մը չի նկատու. եթէ այո՛, ըսի՛րք չունինք:

Զէ՛, դուք էք ցեցերը, միքրոպները, ազգին արիւնովը սնանդ, անոր մարմնոյն վրայ մեծցող քաւաքիքները: Ուրեմն քիչ մը ճիշմարիտ ազգասիրութիւն ունեցող ամեն հայու պարտականութիւնն է թոյլ չտալ որ այլ ևս դուք սքանչելիք. այո՛, նուիրական պարտականութիւն է, ձեզ, միքրոպներդ ոչնչացնելու համար ամենադժուոր հականերխիշը գործածել:

Նոյն

(*) Զօրօի դիմակին տակ ծածկուողը մեզ վաղուց ծանօթ է, ի մօտոյ զինքն ալ կը ճանչցնենք:

Խմբ.

ՆԷՏԱ

ԻՐԱՌՈՒՆՔԻ ՆՈՐ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆԸ

Այսօր մեր բանասիրականի բաժնին մէջ կըսկսինք հրատարակել ՆԷՏԱ անուն պատմութիւն մը, որ Պուլկարիոյ ազատութենէն առաջ պուլկարի ազգին թուրքիոյ բռնապետութեան տակ կրած տառապանքին աղետալ մէկ նմոյշը կը պատկերացնէ: Երբեք անթիւ լէթի, տառնց չափազանցութեան, այլ առավական պարզ ոճով մը: Սա Պուլկարիներէ թարգմանած իրական պատմութիւն մըն է: Ուստի կարծէ որ մեր ընթերցողք ժամանցի համար հետեւին այդ պատմութեան, որմէ կ'ըմբռնեն թէ Պուլկարի ժողովուրդն ալ ասկէ 22-25 տարիներ առաջ նոյն հաւատանքին ու հարստահարութեանց ենթարկուած է Տէրիպաշինի ու Գըրմաշինի, ինչ որ մենք այսօր կը կրենք Հայաստանի մէջ Գիւրտիւրէ և Թուրքիէ:

ԳԱՒԱՌԻ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԸ

— 00 —

ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԵՐԱՐԵՆԿԱՆ

Ազգ. Պատրիարքարանի կողմէ հաղորդուած է պատճենը այն շրջաբերականին, ինչպէս արդէն ծանուցիւն, Թաղ. Խորհուրդներուն և գաւառային Առաջնորդարաններուն:

Գաւառներու մէջ կրկնուի վերստին կարօտութեան և քաղցի տագնապը. և այնքան ստորիկ՝ որքան չէր թերես անցեալ ձմեռ: Գիւղացի ժողովուրդը՝ որուն ապրուստի միակ միջոցն է հողագործութիւնը, շատ տեղ չը կրցաւ այս տարի վարուցան ընել: Երկան կենդանի, գործի և սերմնոց չի ունենալու պատճառաւ. իսկ ուր յաջողեցաւ՝ մեծ ճիւղերով մշակել արտերը, կամ այն է որ երաշտութիւնը չը քացուց հունձը և կամ աննշան եղաւ բերքը. բայց նոյն իսկ այն ալ ամբողջապէս չմնաց գիւղացւոյ, ձեռքը: Վասնզի հարկադրուեցան գոնազան պարտքեր հատուցանելու հնձոց ար-

դիւնքէն. և փոքր բաժին մը ստացան անկէ, որ հազիւ բաւեց իրենց ապրուստին՝ կալի ժամանակ համ առաւ. և երբ քանի մը ամիս, ու այսպէս Գրեթէ ամենքն ալ՝ փոքր բացառութեամբ՝ ձեռնունայն դարձան իրենց տնակները. զուրկ ձմրան պայարէ, զը չկրցան ամբարել: Այս վեհակին հետեւանօք՝ արմատաց գիւնիւր կանուխէ սկսան բարձրանալ տարապալման, արմաթ օր քան զօր պակսեցան հրապարակներէ, եղածն ալ անցնելով շատ գէտներու ձեռք. քաղաքներու մէջ ալ դարեցան տուրիւտաթ՝ որք լծորդուան են հնձոց յաջողութեանց և. դիւրութեանց հետ, աղքատութիւնը ստակացաւ. և ընդհանրացաւ, եւ այս ալ տալի սկզբնաւորութեամբ՝ սովու մեղաւորի ու բոնականը սպառնալիս կ'ընէ ձմրան ետին՝ որ արդէն գաւառներու մէջ սկսած է կանուխ և ուժգնօրէն:

Վանայ, Բաղէշի, Մշոյ, Գիւրի, Երիկի, Ակնայ, Ուրիոյ և այլ առաւորդարաններէ հասած տեղեկագրերու հետագրեր կը գուժեն մօտաւորապէս, և նոյն իսկ անոր սկզբնաւորութիւնը, շատ ողբալի պարագանքով, որք վատնուի աղաքայ մեծութիւնը կը յայտնեն: Երբեք միայն չի՛ առանց մոռնելու աղիւրտով մանրամասնութեանց, որ ի Բաղէշ՝ Ախալքաւառակի 24 հայաբնակ գիւղերու մէջ ծայրայեղ անսուղութեան հասած են. նոյնպէս և Վանայ Ծառայի և Խիզակ գաւառակաց մէջ. ուրիշ գոնազան տեղեր ալ գիւղացի կարօտեալք չկրցաւ սնունդ գտնել և անթուլութենէ հարածական՝ կը թողուն իրենց տունը և տեղը և իրենց կիներով ու տղաներով կերթան մուրալու. բայց թէ քիչ չգիտեն, միայն թէ կը կարծեն փոքրիկ սովասանջ մեղմելէ և լեռներու մէջ կը գտնեն իրենց մահը կարկառահար ու ջրահեղծ:


Ի՞նչ պիտի լինի այս կարօտականութեան վիճակն և ի՞նչ եղբայրական տեսարաններ պիտի պարզուին, երբ ձմեռը գոյրագին և փութով ու ձիւնով փութորկած՝ հաղորդակցութեան միջոցները խափանէ և ամենքը փակէ իրենց դատարկ տնակներուն մէջ, պաշարով ձիւնի թանձր խաւերով: Անցեղ ձմեռ դարձեալ համայնական վիճակի մը

շարաթը աշխատէ և ուտելու հաց մի գտնենք:

Ես զոյգ մը գուլպայ հիւսած ու մօր տուած էի որ ծախէ ու ինձի բան մը գնէ: Մայրս առաւ զանոնք, գիտե՞ք ժպտեցաւ ու ըսաւ. «Էհ, Լիլա, որք ծախեմ, քու ստաջին գործդ. հայտնէ քանիկայ կատուին հազցնենք, որովհետեւ ատ գուլպաներ առաջին գործածներդ են»: Մեր գիւղը մինչեւ հիմա ալ սովորութիւն կայ որ, երբ փոքր աղջիկ մը առաջին անգամ գուլպայ հիւսէ, նախ կատուին կը հազցնեն ու յետոյ գետը կը նետեն: Եւ ասիկայ անոր համար կրնան որ մեր գուլպաներ միայն մերկերն ու բոկոտները ծածկեն, ինչպէս է կատուն, և մեր գործ այնպէս արագ երթայ, ինչպէս գետը կը քաղ գուլպաները:

Է՛հ, մայրիկ, ատ գուլպաներ առաջին են միթէ: Միթէ մինչեւ հիմա երեք զոյգ չենտեցիր, ատ գուլպաներ չորրորդ են, ըսի:

(Շարունակելի)



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԷՏԱ

(ՄԱՍԻՍ ՊԱՏՐԱՐԿԱՆ)

Ի՛շ, երբեք Պալաքանեան, Սրբնի՛ր քո խոր քունէ, եւ ազգին դէմ Օսմանեան Պաշկարները սա՛ր գիւնէ: Պուլկ. Երգ

Թուրքիոյ հե՛տ քառեկաւորօրէն ջըլլար:

Ազգ. առած

Ա.

Շատ առաջ պատահեցաւ աս, ես հազիւ կը յիշեմ, որովհետեւ դեռ փոքր էի, հազիւ երեք թիւ հասակով: Կապրէի ինչպէս ամեն տղայ ու հոգ չունի, թող հոգ ընեն մեր ծնողներ: Անգամ մը կրակին քով անկիւն մը նըստած՝ ձեռքերս կը տաքցնէի — կը մտէի: Փայտերը կը վառէին վառարանին մէջ ու ատեն ատեն կը ճարճատէին. ես մէկ ձեռքով ունեւիւն կը բռնէի, կրակին հետ կը խաղայի ու մեծ կտորները կը կտաւէի որ կայծ ելլայ, իսկ միւս ձեռքով կատուն կը բռնէի, որ ծունկերիս կուգար կը կծկուէր: Այս կատու շատ զեղեցիկ էր, մազը գեղին, սեւ ու ձերմակ էր, իսկ ականջները կար-

մրկեկ էին. կատուն գլուխը ետեւի թաթերին անցուցած ու կոկորդիլն ալ անանկ անոյշ կը մլաւէր, որ ինձի ալ մրափելու փափաք կուգար: Մայրս քաղար գացած էր ծախելու և գնելու համար, իսկ հայրս փայտ կտրելու գացած էր անտառ: Զուրդ ինչ զատ մէկը չկար. ամեն տեղ ամայութիւն և այս մեռելային լուսթեան մէջ տեղ աւանջիս քովէն տեսակ տեսակ ձայներ կանցնէին. մերթ ձայն մը կը թուէր ու ականջիս տակ կ'երգէ իր օխուր երգը, որ կը նմանէր Տէր Բէնչօի «Տէր ուղորմեա»ին զոր կ'երգէր միտել թաղած ատենը, մերթ աքաղաղը կը խօսի ցանկին վրայ, մերթ հաւ մը կը կարկաչէ քովի տան միջ, մերթ մանկական ձայն մը ականջիս կը հասնի, «Հէ՛յ, Սէմբօ, գնդակը բե՛ր» կը պոռայ տղայ մը ու դարձեալ լուսթիւն կը արիւն:

Այս ատեններ մեր գեղը ամեն շաբաթ քաղար կըլլայ: Շատ զի դերէ ու քաղաքներէ վաճառականներն ու հրէաներ կուգային սպորտիք ծախելու: Թիւրքերը կը բերէին խնձոր, տանձ, զեղձ, ծիրան, խաղող և ուրիշ տեսակ միքրեր, Պուլկարները կը ծախէին բրինձ, կարմիր պղպեղ, բակլայ, ռուպ, սոխ, կաղամբ և ուրիշ շատ տեսակ բանջարեղէն. իսկ շրթերը կը բերէին ձաւար, սեւ ցորեն, կորեակ, և

եղիպտացորեն ու գարի: Խոշոր մարդեր են մեր շրթերը, մեծ, հզօր մարդեր — անոնց թիկունքը Գլաւէվիլ Մարքօի (1) թիկունքին կը նմանին. իսկ ձեռքերին երկաթի պէս են: Երբ կը նայիս այս Երեւանի, կը խորհիս եթէ ասոնցմէ մէկը միմիայն երկու մատովը սեղմէ քեզ, հողիդ ակունքէդ զուրս կը ցատկէ. բայց եթէ քիչ մը աւելի մօտէն դիտես, պիտի տեսնես որ մեծ կուրծքեր ունին փոքր ու երկչոտ սրտեր: Մեր մէկ Սթարա-Բլանացի Պուլկարը կրնայ երեք շօք ձեռքի, Բայց ինչո՞ւ այս այսպէս է:

Զփռեցի՛ր լը ծախեն ամեն տեսակ մանր մունր բաներ, անոնց քով կը գտնաս կտաւ, ժապաւէն, կոճակ, սեւ պղպեղ, մազտաքէ, ծծումբ, ասեղ, զանազան տեսակ զեղեր և աշխարհի մէջ դատուած ուրիշ ամեն բան: Իսկ մեր կիներ գուլպայ կը հիւսեն, չուխայ կը բանին, կը տանին քաղաքը կը ծախեն և ինչ որ առնեն անով իրենց պէտք եղածը կը գնեն: Վա՛յ աղքատներին: Հինգ վեց կին կը ժողուուին, պարկ մը ցորեն կը գնեն ու իրենց մէջ կը բաժնեն: Բայց մէկ պարկ հաճաքը կըրնայ միթէ վեց տուր կերակրել: Վա՛յ է եկեր աղքատների գլխին. ամբողջ

(1) Պաշկարների Հեռակիցը:

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ